ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԼՄ-ՇՀԱՇՁԲ-16/01-3-2020

ՀՀ Լոռու մարզի՝ Թումանյանի տարածաշրջանի, մարզային նշանակության ավտոճանապարհների՝ ընթացիկ, ձմեռային պահպանման և շահագործման աշխատանքների գնման

ք. Վանաձոր 18 հունվարի 2020թ.

ՀՀ Լոռու մարզպետարանն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Մխիթարյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա /այսուհետև՝ Պատվիրատու/, մի կողմից և «Թումանյան ՃՇՇՁ» ԲԲԸ -ն, ի դեմս տնօրեն Մ.Տիտանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, /այսուհետև՝ Կապալառու/, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ինչպես նաև հիմք ընդունելով 30 դեկտեմբերի 2015թ. կնքված N ԼՄ-ՇՀԱՇՁԲ-16/01-3 գլխավոր պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր), փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը.

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի կամ նրա կողմից որոշված Ստացողի հանձնարարությամբ կատարել Պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով և ըստ կցվող 2020թ. սպասարկման ենթակա ավտոճանապարհների ցանկով նախատեսված՝ ՀՀ Լոռու մարզի՝ Թումանյանի տարածաշրջանի, մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման ու շահագործման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն համաձայնագրի N1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2020 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ հանդիսանալով Պայմանագրի անբաժանելի մաս:

2. Աշխատանքի կատարման պայմանները

2.1 Աշխատանքի արդյունքը հանձնվում է Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին:

3. Համաձայնագրի գինը և վճարման կարգը.

3.1. Սույն համաձայնագրով Կապալառուի կողմից կատարված Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 28 271 800.0 (քսանութ միլիոն երկու հարյուր յոթանասունմեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Աշխատանքի գինը ներկայացված է սույն համաձայնագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածում: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

3.2. Պատվիրատուն իր համաձայնությամբ կատարված Աշխատանքի դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն համաձայնագրի N2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

3.3 Կատարողը պարտավոր է ապահովել ճանապարհային կահավորանքի, այդ թվում՝ նաև արգելափակոցների, վնասման դեպքերի հաշվառումը և ճանապարհային կահավորանքին պատճառված վնասների վերականգնումը՝ համաձայն 2010 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով սահմանված պահանջների:

3.4 Կատարողը սույն համաձայնագրի 3.5 կետով սահմանված՝ ճանապարհային կահավորանքին պատճառված վնասի վերականգնման համար կարող է փոխհատուցում պահանջել վնաս պատճառող ֆիզիկական կամ իրավաբանական անձից (այդ թվում՝ ապահովագրական ընկերությունից):

4. Այլ պայմաններ.

4.1. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, Աշխատանքի հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

4.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

4.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N1, N 2 հավելվածները և սպասարկման ենթակա ա/ճանապարհների ցանկը բաղկացած են 4 թերթից և հանդիսանում են համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Պատվիրատու | Կապալառու |
|---|---|
| ՀՀ Լոռու մարզպետարան | «Թումանյան ՃՇՇՁ» ԲԲԸ |
| ք. Վանաձոր, Հայքի հրապարակ | ք.Ալավերդի, Կ/կ [illegible] |
| ՀՎՀՀ 06930769 | ՀՎՀՀ 06600269 |
| ՀՀ 900231671026 | Հ/Հ 247790301... |
| ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ | «Արդշինբանկ» ՓԲԸ |
| Ա.Մխիթարյան | Մ.Տիտանյան |

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հավելված 1

«_18_»_հունվարի_ 2020թ.
Կնքված N ԼՄ-ՇՀԱՇՁԲ-16/01-3-2020 համաձայնագրի

նախարարության գերատեսչության պետական
կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ Լոռու մարզպետարան

Իրականացվող ծրագիրը՝ Թումանյանի տարածաշրջանի մարզային ենթ.ա/ճան ձմեռային պահպ., ընթացիկ պահպանություն:

Բաժին 04, Խումբ 05, Դաս 01

| ը/կ | Ձեզ տրվող աշխատանքի անվանումը | Նախատեսվում է գնել | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ /հազ.դրամ/ | II եռամսյակ /հազ.դրամ/ | III եռամսյակ /հազ.դրամ/ | IV եռամսյակ /հազ.դրամ/ | /հազ.դրամ/ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Թումանյանի տարած.-ի մարզային ենթակայության ա/ճ ձմեռային պահպանութ. Ընթացիկ պահպանություն | **2800.0** | **9800.0** | **12724.8** | **2947.0** | **28271.8** |
| | այդ թվում՝ | | | | | |
| | ձմեռային պահպանություն | 2800.0 | - | - | 2947.0 | 5747.0 |
| | ընթացիկ պահպանություն | - | 9800.0 | 12724.8 | - | 22524.8 |
| ***Ընդամենը*** | | ***2800.0*** | ***9800.0*** | ***12724.8*** | ***2947.0*** | ***28271.8*** |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Լոռու մարզպետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231671026
ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ

Ա.Մխիթարյան
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Թումանյան ՃՇՇՁ» ԲԲԸ
ք.Ալավերդի, կ/կ Հաղպատ
ՀՎՀՀ 06600269
Հ/Հ 247790301144
«Արդշինբանկ» ՓԲԸ

Մ.Տիգրանյան
Կ.Տ.

Հավելված 2

«_18_»_հունվարի_ 2020թ.
Կնքված N ԼՄ-ՇՀԱՇՁԲ-16/01-3-2020 համաձայնագրի

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հազ.դրամ

| Ձեռք բերվող ապրանքի աշխատանքի, ծառայության անվանումը | Ընդ. տարե-կան | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ ՀՀ. պետ բյուջեից, ընդհ. 28271.8 հազ.դրամ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | | | II եռամսյակ | | | III եռամսյակ | | | IV եռամսյակ | | | Տարի |
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմ. | հոկտեմ. | նոյեմբ. | դեկտ. | |
| Թումանյանի տարածաշրջանի մարզային ենթ.ա/ճան. ձմեռային պահպանություն, ընթացիկ պահ-պանություն | 28271.8 | 2800.0 | 2800.0 | 2800.0 | 12600.0 | 12600.0 | 12600.0 | 25324.8 | 25324.8 | 25324.8 | 28271.8 | 28271.8 | 28271.8 | 28271.8 |
| այդ թվում<br>ձմեռային պահպանություն<br>ընթացիկ պահպանություն | 5747.0<br>22524.8 | 2800.0 | 2800.0 | 2800.0 | 2800.0<br>9800.0 | 2800.0<br>9800.0 | 2800.0<br>9800.0 | 2800.0<br>22524.8 | 2800.0<br>22524.8 | 2800.0<br>22524.8 | 5747.0<br>22524.8 | 5747.0<br>22524.8 | 5747.0<br>22524.8 | 5747.0<br>22524.8 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Լոռու մարզպետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231671026
ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ

Ա.Մխիթարյան

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Թումանյան ՃՇՇՁ» ԲԲԸ
ք.Ալավերդի, կ/կ Հաղպատ
ՀՎՀՀ 06600269
Հ/Հ 247790301144
«Արդշինբանկ» ՓԲԸ

**Թումանյանի տարածաշրջանում՝ 18.01.2020թ. N ԼՄ-ՇՀԱՇՁԲ-16/01-3-2020 համաձայնագիր /«Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ/ 2020թ-ին սպասարկման ենթակա մարզային ա/ճանապարհներ**

| Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը | Ավտոճա-նապարհի տեխնի-կական կարգը | Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/ | Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը | Սպասարկ-ման պա-հանջվող մակար-դակը | Սպասարկ-վող հատ-վածի երկարու-թյունը /կմ/ | Միավորի գինը /հազ.դր./ | Ընդամենը /հազ.դր./ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| *Պահպանման ժամանակաշրջանը՝ Ձ Մ Ե Ռ* | | | | | | | |
| S-5-14 Մ6 -Ախթալա- Շամլուղ | մարզային II-IV | 1.9 | Բավարար SԲ | բավարար | 1.9 | 184.2 | 350.0 |
| S-5-26 Հաղպատի պատմական հուշարձան-Ծաղկաշատ | մարզային II-IV | 9.0 | Բավարար SԲ | բավարար | 9.0 | 184.2 | 1657.8 |
| S-5-46 Ալավերդի-Ակներ | մարզային II-IV | 4.0 | Բավարար SԲ | բավարար | 4.0 | 184.2 | 736.8 |
| S-5-58 Հ33-Մղարթ | մարզային II-IV | 0.7 | Լավ SԼ | բավարար | 0.7 | 184.2 | 128.9 |
| S-5-60 Հ35 - Արդվի | մարզային II-IV | 2.0 | Բավարար SԲ | բավարար | 2.0 | 184.2 | 368.4 |
| S-5-64 Ալավերդի - Կաճաճկուտ | մարզային II-IV | 3.5 | Բավարար SԲ | բավարար | 3.5 | 184.2 | 644.7 |
| S-5-67 Հ35 - Ծաթեր | մարզային II-IV | 2.0 | Լավ SԼ | բավարար | 2.0 | 184.2 | 368.4 |
| S-5-68 Հ22 - Չկալով | մարզային II-IV | 2.1 | Բավարար SԲ | բավարար | 2.1 | 184.2 | 386.8 |
| S-5-69 Հ70 - Անիձոր | մարզային II-IV | 3.0 | Բավարար SԲ | բավարար | 3.0 | 184.2 | 552.6 |
| S-5-73 Մ6-Քարինջ-Հ22 | մարզային II-IV | 3.0 | Բավարար SԲ | բավարար | 3.0 | 184.2 | 552.6 |
| ***Ընդամենը*** | | | | | | | ***5747.0*** |

## Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ, ԱՄԱՌ, ԱՇՈՒՆ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Տ-5-13՝ Ախթալա (Տ-5-14) - Մեծ Այրում - Ճոճկան - Քարկոփ - /Մ-6/ | մարզային II-IV | 4.0 | Բավարար ՏՔ | միջին | 4.0 | 1344.0 | 5376.0 |
| Տ-5-26՝ /Հ-25/ - Ծաղկաշատ | մարզային II-IV | 4.0 | Բավարար ՏՔ | բավարար | 4.0 | 546.0 | 2184.0 |
| Տ-5-46՝ /Մ-6/ (Ալավերդի) - Սանահին թաղամաս - Ակներ | մարզային II-IV | 4.3 | Բավարար ՏՔ | միջին | 4.3 | 1344.0 | 5779.3 |
| Տ-5-60՝ /Հ-35/ (Այգեհատ) - Արդվի - Արդվի վանք | մարզային II-IV | 0.9 | Բավարար ՏՔ | բավարար | 0.9 | 546.0 | 491.4 |
| Տ-5-64՝ /Մ-6/ (Ալավերդի) - Աքորի - Կաճաճկուտ /Աքորի-Կաճաճկուտ հատվածը/ | մարզային II-IV | 4.0 | Բավարար ՏՔ | բավարար | 4.0 | 546.0 | 2184.0 |
| Տ-5-65՝ /Տ-5-66/ - Հագվի | մարզային II-IV | 1.0 | Բավարար ՏՔ | միջին | 1.0 | 1344.0 | 1344.0 |
| Տ-5-66՝ /Հ-35/ (Օձուն) - Ամոջ - /Հ-35/ | մարզային II-IV | 1.0 | Բավարար ՏՔ | միջին | 1.0 | 1344.0 | 1344.0 |
| Տ-5-68՝ /Հ-22/ - Չկալով | մարզային II-IV | 1.0 | Բավարար ՏՔ | բավարար | 1.0 | 546.0 | 546.0 |
| Տ-5-69՝ /Հ-22/ - Ահնիձոր | մարզային II-IV | 2.0 | Բավարար ՏՔ | բավարար | 2.0 | 546.0 | 1092.0 |
| Տ-5-73՝ /Հ-22/ - Քարինջ | մարզային II-IV | 3.0 | Բավարար ՏՔ | բավարար | 3.0 | 546.0 | 1638.0 |
| Տ-5-82՝ /Հ-22/ - Լորուտ | մարզային II-IV | 1.0 | Բավարար ՏՔ | բավարար | 1.0 | 546.0 | 546.0 |
| ***Ընդամենը՝*** | | | | | | | ***22524.8*** |
| ***Ամբողջը՝*** | | | | | | | ***28271.8*** |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Լոռու մարզպետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231671026
ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ

Ա.Մխիթարյան
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Թումանյան ՃՇՇՁ» ԲԲԸ
ք.Ալավերդի, Կ/Կ Հաղպատ
ՀՎՀՀ 06600269
Հ/Հ 247790304144
«Արդշինբանկ» ՓԲԸ

Մ.Շիրինյան
Կ.Տ.